Ատով խոցեցիր դու զիս, ես ղարի՛պ եմ, երթամ ընդ ո՞ր:

Ժ Ա.

Աչերս երեսէս ի վար լօք գանգատ արաւ ի սրտիս.
–Երթամ սիրոյ տէր լինիս, գան հազար չարի ածեն զիս:
Սրտիկս աչերուս ասաց՝ – Կուրանա՛մ թէ ծուռ կու խօսիս.
Ինչ որ աչք չիհաւնէ, չիխաբէր հազար լեզու զիս:

Ժ Բ.

Լուսի՞ն, պարծենաս, ասեն, «լուս կուտամ ես աստընուորիս».
Ահա՛ հողեղէն լուսին ի գրկիս ’ւ երեսն երեսիս:
Թէ չես աւտալ այս գերուս, յետ տանեմ ըզփեշ կապայիս.
Վախեմ սիրոյ տէր լինիս, լուս պակաս տաս աստընուորիս:

Ժ Գ.

Կարմիր ու սպիտակ երես, ա՛մ, քանի՛ զիմ սիրտս աչըրես.
Կ’երթաս ի թուխ ամպն ի ներս, ամպուգոլ կ’անես զիս կ’երես,
Կոճկիկդ ալ արձակ այնես ու ճերմակ ծոցըդ ցուցանես,
Անկի զիս մահրուն հանես. թողի զփողուն ձայնըն չիլըսես:

Ժ Դ.

Ի՞նչ անեմ կամ ի՞նչ լինամ երբ նայիմ որ դուն չերեւիս.
Սրտիս ալ ո՞նց տամ համբեր՝ երբ լեզուովդ ի յիս չիխօսիս:
Կուլամ նայ կուտաս ճուղապ՝ «Սապռ արա՛, սիրուս հասանիս.
Սեւ սապռ ա՛մ, քանի՛ անեմ, եփեցա՛ւ ճիկարս ի փորիս:

Ժ Ե.

Տեսայ իմ հոգուս հոգին որ կ’երթար հետ մէկի մըն ալ.
Ձեռկունքն ի վերան ձըգել ու գանգատ կ՛անէր մէկի մ՚ալ.
Սրտիկըս ի յիս ասաց թէ անոր թարկըն պիտի տալ.
Այն սէրն որ ճորով լինի, հետ անոր խաղալն է մուհալ:

Ժ Զ.

Մէջկունքդ է բարակ ’ւ երկար, ծըծերուդ մէջըն կայ խայեալ.
Շատ մարդ է մեռել սիրուդ, կու վախեմ թէ մեռնիմ ես ալ.
Մեռնիլ պիտի, չիկայ ճար. զայս հոգեկս ի քեզ պիտի տալ: